Հաստատում եմ՝
Եվրասիա միջազգային համալսարանի
ռեկտոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Օհանյան
30-ը դեկտեմբերի 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ
ԼԻԼԻԹ ՀԱՅԿԱԶԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ
«Իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետություն. սահմանադրական փոփոխությունների համատեքստում» թեմայով

«ԺԲ.00.01-Պետության և իրավունքի տեսություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Իրավական ուղին բռնած Հայաստանում, զարգացած իրավական համակարգ ունեցող երկրների նման, օրենսդրությունը դինամիկ կերպով զարգացող հասարակության պայմաններում իրավական համաշխարհային քաղաքակրթության նվաճումների և կիրառման սեփական փորձի հիման վրա հետևողականորեն կատարելագործվում է, ձեռք բերում մարդասիրական, առաջադիմական բնույթ: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե մեզանում ևս չպետք է բարձրացնել իրավաստեղծ մարմինների դերը, իսկ ապա ստեղծել, ամրապնդել և արդյունավետորեն իրացնել ժամանակակից, ամբողջական ու կուռ այնպիսի օրենսդրություն, դատական և այլ իրավական պրակտիկա, որը կարող է թավշյա (ժողովրդավարական) հեղափոխությունից հետո զարգացման անկաշկանդ ուղին բռնած մեր երկրում լիարժեքորեն ապահովել մարդու և քաղաքացու հանրաճանաչ իրավունքների ու հիմնարար ազատությունների, սոցիալական շուկայական տնտեսության, տնտեսական ազատ գործունեության, տնտեսական մրցակցության, մասնավոր (նաև՝ պետական) սեփականության, ձեռնարկատիրության անխոչընդոտ պաշտպանությունը: Եվ քանի որ թվարկվածներն առաջին հերթին իրագործվում են լավորակ օրենսդրության միջոցով, իսկ ատենախոսական թեման հենց այդ է, ապա քննարկվող թեման

մշտապես արդիական է, անընդհատ ուսումնասիրություն պահանջող իրավական կատեգորիա:

Սկզբից ևեթ նշենք, որ ատենախոս Լիլիթ Մուրադյանին հաջողվել է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված օպտիմալ ծավալով իր աշխատության մեջ վերհանել իրավաստեղծման իրավական մշակույթի համալիր հարցերը, շարադրել դրանց էությունն ու հասկացությունը, իրավաստեղծ կառուցակարգը, դրա բնորոշ գծերը, դրա համակարգային մեթոդաբանությունը, իրավաստեղծման զարգացման հիմնական փուլերը, իրավաստեղծման տեսության և իրավաճանաչման հիմնադրույթի հարաբերակցությունը, իրավաստեղծ քաղաքականության սկզբունքները և ուղղությունները, բացահայտել իրավաստեղծման հիմնական ընդհանուր և հատուկ գործառույթները, համակարգել իրավաստեղծ գործունեության տեխնոլոգիաները և մեթոդիկաները թվարկել և վերլուծել իրավագոյացման գործոնները և որ կարևոր է՝ բացահայտել իրավաստեղծ գործընթացի ձևախեղումները, նորմաստեղծման պլանավորվածության և օրենսդրական ակտերի, հայեցակարգերի անհրաժեշտությունը, իրավաստեղծ որոշումների իրավական ձևերի ոչ հստակ տարաբաժանումը, իրավաստեղծ գործունեության ոչ պատշաճ պահպանումը և այլն: Ընդ որում, հեղինակն իրավացիորեն նշում է, որ ընդհանրապես և իր իսկ կողմից կիրառվող իրավաստեղծման մեթոդաբանական նորույթը իրավունքի ձևավորման մեջ է, որը նշանակում է դետերմինիստական կապերի հաղթահարման և իրավական հայեցակարգերի ինտեգրման մեջ, իսկ դա իր հերթին ենթադրում է իրավաստեղծման գործընթացում տարբեր սոցիոմշակութային տեխնոլոգիաների օգտագործում:

Ատենախոսն իր աշխատանքի 7-9-րդ էջերում հիմնավորված ձևով ներկայացրել է նորույթը: Միանգամայն ընդունելի է հեղինակի այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի օրինագծերի և այլ օրենսդրական ակտերի

հայեցակարգերի մշակման ընթացքում անհրաժեշտ է բացահայտել այն թիրախավորված սոցիալական ոլորտները, որոնք օբյեկտիվորեն ենթակա են կանոնակարգման և այն նախադրյալների համալիրը՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն, որոնք առավել հավանականությամբ կարող են ներազդել ապագա իրավակարգավորումների վրա: Սա չափազանց կարևոր հարցադրում է, որը լիարժեքորեն չի պահպանվում ՀՀ ԱԺ ներկայացվող կառավարական կամ պատգամավորական օրինագծերի ժամանակ: Այս ճշմարիտ դատողությունը և առաջարկը պահպանելու դեպքում մեր օրենքները կհիմնավորվեն հիմնավորապես և կյանքի պահանջներից ելնելով:

Ատենախոս Մուրադյանի կողմից հրատարակված 4 մենագրությունները և 4 գիտական հոդվածները իրապես արտացոլում են աշխատանքի հիմնական բովանդակությունը և կարող են օգտագործվել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ ակադեմիական գործընթացներում:

Նշված դրականի հետ մեկտեղ, մեր կարծիքով, աշխատանքը զերծ չէ նաև թերություններից ու բացթողումներից, որոնք հանգում են հետևյալներին՝

1. Հայաստանի Հանրապետությունում (և ոչ միայն) Կառավարության, ԱԺ պատգամավորների, ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնության իրացումը մեծապես ընդգրկում է օրենսդրական փոփոխություններն ու լրացումները, որոնք հետևանք են գերազանցապես իրավունքի և օրենսդրության մեջ առկա բացերի : Մեր կարծիքով հեղինակը մի առանձին գլուխ պետք է նվիրեր իրավունքի և օրենսդրության մեջ առկա բացերի հայտնաբերման (բացահայտման) և վերացման առանձնահատկություններին, նաև գործադիր այլ մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրավակիրառման գործընթացում բացահայտված բացերի վերացման կառուցակարգին: Մեր համոզմամբ նրա մոտ ստանդարտները լավ են մշակված, բայց կենդանի իրավունքն իր դրսևորումներով թերի է բացահայտված:

2. Ատենախոսը իրավաստեղծ գործունեության սկզբունքները թվարկել և քննարկել է ոչ լրիվ: Աշխատանքի 42-59 էջերում որպես այդպիսիք նա նշել և մանրակրկիտ անդրադարձել է իրավական և սոցիալական լեգիտիմությանը (օրինականությանը), ժողովրդավարությանը, հրապարակայնությանը, գիտական հիմնավորվածությանը հիմնավորված մոտեցմանը: Այդ սկզբունքները մեկնաբանվել են բարձր գիտական մակարդակով, սակայն չեն թվարկվել և չեն մեկնաբանվել իրավաստեղծ գործունեության ընթացքում մարդու և քաղաքացու արժանապատվությունը, անօտարելի իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք ճանաչելու, ստեղծագործական բնույթ ունենալու պրակտիկայի հետ կապի ապահովման, իրավական ակտերի ձևի և բովանդակության համապատասխանության, իրավաբանական եզրութաբանության միասնականության, հատուցման (ռետրիբուտիվ ապահովվածության) սկզբունքներն առանձին-առանձին, թեկուզև դրանք այս կամ այն ծավալով ընդգրկվել են քննարկված հիմնական սկզբունքների մեջ: Ծավալային առումով ատենախոսը դրանք կարող էր վերլուծել առանձին-առանձին:

3. Միշտ չէ, որ հեղինակը պահպանել է գրականության ցանկի այբբենականությունը:

Պետք է նշել, սակայն, որ վերը բերված նկատառումներն ունեն մասնավոր և խորհրդատվական բնույթ, որոնք էականորեն չեն կարող ազդել Լիլիթ Մուրադյանի աշխատանքի ընդհանուր դրական արժանիքի վրա:

Եզրակացություն. **Լիլիթ Հայկազի Մուրադյանի «Իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. սահմանադրական փոփոխությունների համատեքստում» վերտառությամբ ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն**

ուսումնասիրություն, որը ներառում է իրավունքի և պետության տեսության, իրավաստեղծ օրենսդրական գործունեության և իրավակիրառ պրակտիկայի համար էական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն ու գործնականորեն հիմնավորված լուծումներ, իսկ հետազոտության արդյունքները կիրառելի են ոչ միայն իրավաստեղծ գործունեության, այլ նաև ակադեմիական գործընթացներում: Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով առաջադրված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Ատենախոսությունը քննարկվել է Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի 2020թ. դեկտեմբերի 28-ի առցանց նիստում, որին մաս - նակցել են իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ.Պետրոսյանը, ամբիոնի վարիչի տեղակալ Ն.Զոմարդյանը, ամբիոնի անդամներ՝ իրավաբ.գիտ.թեկնածուներ Ա.Այվազյանը, Ն.Աքիլյանը, ամբիոնի անդամներ Ք.Մինասյանը, Ա.Չոբանյանը, Լ.Թևոսյանը:

Եվրասիա միջազգային համալսարանի
Իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ վաստակավոր իրավաբան Ռ.Պետրոսյան